ԹԵՅՇԵԲԱԻՆԻ (ԿԱՐՄԻՐ-ԲԼՈՒՐ) ԳԻՆՈՒ ԿԱՐԱՍՆԵՐԸ

Զ. Մ. ՂԱՍԱԲՅԱՆ

Հին Արևելքի երկրներում տարբեր չափերի ու տարողության կարասները լայնորեն օգտագործվել են տնտեսության բազմաթիվ ճյուղերում։ Եգիպտոսում, Ասորեստանում, խեթական, ինչպես և ուրարտական թագավորությունների մեջ հացահատիկները և բազմատեսակ գյուղատնտեսական մթերքներ՝ հատկապես գինին, գարեջուրը և յուղը պահվում էին կարասներում։ Ուրարտուի տնտեսության մեջ, ինչպես պարզվում է պեղումներից, կարասները բացառիկ նշանակություն են ունեցել, սակայն նրանց պատրաստման տեխնոլոգիայի և եղանակների մասին հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել։ Ուրարտագետներ Լեման Հաուպտը, Գրիգոր Ղափանցյանը, Բորիս Պիոտրովսկին և ուրիշներ ուսումնասիրելով Ուրարտուի պատմությունն ու կուլտուրան, տնտեսական հարցերի կապակցությամբ համառոտակի անդրադարձել են նաև ուրարտական տարայի առանձին տեսակներին։

Թոփրակ-կալեի, Վանի, Արգիշտիխինիլիի, Թեյշեբաինիի և Էրեբունիի պեղումների շնորհիվ հայտնաբերվել են խեցեղենի և տարայի բազմատեսակ մնացորդներ։ Ձեռնարկելով դրանց ուսումնասիրությունը, առավելապես հիմնվել ենք հնագիտական նյութի վրա, համեմատելով այդ նյութը ազգագրական տվյալների հետ, իսկ պատրաստման տեխնոլոգիան ուսումնասիրելիս մեզ օգնել է ծանոթությունը այժմյան տնայնագործական եղանակների հետ։

Թեյշեբաինիի պեղումներից հայտնաբերվել են տարայի հետևյալ տեսակները.

1. Կարծր տարա՝ տարբեր տեսակի և չափերի կավե անոթներ, կարասներ, կժեր, կճուճներ, քարից պատրաստված տաշտեր, սվազաններ, մետաղյա անոթներ, կաթսաներ և այլն։

2. Կիսափափուկ տարա՝ կողովներ, ծղոտե զամբյուղներ և սակառներ։ Սրանցից հնչին նմուշներ են հայտնաբերվել, որովհետև ենթակա են եղել արագ փչացման, բացի այդ, միջնաբերդի հրդեհի ժամանակ, նրանց մի մասը այրվել է, իսկ մի որոշ մասն էլ օգտագործվել Բշնամու կողմից ավարը տեղափոխելու համար։

3. Փափուկ տարա՝ պարկեր, տոպրակներ և այլն։ Տիկը նույնպես պատկանել է փափուկ տարայի տեսակներին և կավե տարայից հետո, Հին Աշխարհում, ամենատարածվածն է եղել։ Դժբախտաբար արագորեն փտման ենթակա այդ տարայի ոչ մի նմուշը մեզ չի հասել։

Վերը նշված ուրարտական տարայի տեսակներից Թեյշեբաինիում (Կարմիր-բլուր) հիմնական հանդիսացել են մեծ քանակությամբ կավե անոթները, որոնց մեջ աչքի են ընկնում հսկայական կարասները։ Իրենց քանակով այդ կարասները երկրորդ տեղն են գրավում հայտնաբերված կավե անոթների թվում և մեծ մասամբ գտնվել են վերջին տասնամյակում կատարված պեղումների ժամանակ։

Կարմիր-բլուրի գինու ութ մառաններում հայտնաբերվել է մոտավորապես 450 կարաս։ Ամենամեծ մառանը հայտնաբերվել է միջնաբերդի երկրորդ հարկում, որտեղ հինգ շարքի վրա տեղավորված են եղել 120 կարաս։ Մնացած յոթ մառանները հայտնաբերվել են միջնաբերդի ստորին հարկում։ Նույնանման կարասներ հայտնաբերվել են նաև ուրարտական այլ բնակավայրերում։ Այսպես, օրինակ, Լեման Հաուպտի կողմից Թոփրակ-կալեի պեղումների ժամանակ հայտնաբերվել է գինու մառան 25 կարասով։

1958 թ. Էրեբունիի (Արին-բերդի) պեղումների ժամանակ հայտնաբերվել է գինու մառան 11 կարասով, իսկ 1959 թ. մառան 9 կարասով։ Կարասներ են հայտնաբերվել նաև ուրարտական Արգիշտիխինիլի (Արմավիրի բլուր, Հոկտեմբերյանի շրջան) քաղաքում։

Ուսումնասիրելով նույնանման կարասների պատրաստման այժմյան տնայնագործական եղանակները, որ քիչ են տարբերվում հայկական և վրացական միջնադարյան եղանակներից, հնարավոր է պատկերացում կազմել ուրարտացիների գործադրած եղանակի մասին։ Դրան օգնում են նաև Միջագետքում ու Եգիպտոսում պեղումների ժամանակ հայտնաբերված կավագործական արհեստանոցների և թրծման հնոցների վերաբերյալ եղած նյութերը։

Ուրարտուում, ինչպես և Հին Արևելքի մյուս երկրներում այդպիսի արհեստանոցները կառուցել են բացօթյա կամ ծածկի տակ՝ գետերի, առուների և ջրանցքների կողքին՝ նկատի ունենալով մեծաքանակ ջրի անհրաժեշտությունը կավագործական աշխատանքներում։ Այդպես են կառուցել նաև միջնադարյան Հայաստանում ու Վրաստանում։ Կավագործական արհեստանոցներ են հայտնաբերվել Թբիլիսիում Կուրի ափին, Դվինում՝ Բզովան գյուղի գետակի ափին։ Կավագործական արհեստանոցների կառուցված լինելը Թեյշեբաինիի միջնաբերդի բակում, առավել ևս ներսում, բացառված է, քանի որ նմանօրինակ աշխատանքները հնարավոր չէր իրականացնել այդպիսի վայրում։ Դժբախտաբար մինչև օրս ուրարտական ոչ մի բնակավայրում, այդ թվում նաև Թեյշեբաինիում, չեն հայտնաբերվել բրուտի արհեստանոցներ և հնոցներ։

Յուվա գյուղի (Արտաշատի շրջան) բազմամյա բրուտ-վարպետ Գեղամ Մասումյանը մեզ հետ միասին ուսումնասիրելով Թեյշեբաինիի խեցեղենի կավի տեսակն ու որակը, գտնում է, որ այդ կավը բարձր որակի է եղել և Երևանի օդանավակայանի ու նրա շրջակայքի տերիտորիայի կավից է[2]։

Հավանական է, որ բրուտի արհեստանոցները եղել են Իլդարունի գետի (Հրազդանի) ափին, իսկ կարասներ կամ այլ անոթներ պատրաստելու համար կավը բերել են վերը նշված վայրից։ Կարասները պատրաստելու ժամանակ կավին խառնել են նաև ավազ ամրություն տալու և թրծման ժամանակ ճաքելու վտանգը կանխելու համար։

Թեյշեբաինիում կավագործական արհեստանոցի առկայության մասին է վկայում նաև բաղարի պեղումների ժամանակ № 4 բնակարանից հայտնաբերած թրծված կավից պատրաստված բրուտի դուրգի սկավառակը[3]։ Վերջինիս ներքևի գլանաձև մասը, որ ծառայել է իբրև առանցքակալ՝ սկավառակը թափանիվին միացնելու համար, համեմատած Դվինի պեղումներից հայտնաբերված միջնադարյան դուրգի սկավառակի առանցքակալի հետ, ավելի կարճ է[4]։

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս են ընթացել կարասների պատրաստման աշխատանքները։ Ըստ երևույթին, ինչպես Եգիպտոսում, Ասորեստանում, այնպես էլ Ուրարտուում գոյություն է ունեցել աշխատանքի խիստ բաժանում։

Մի խումբ մարդիկ զբաղված են եղել սև աշխատանքներով. պատրաստել են կավը, փոխադրել են և կոխել, իսկ բրուտ վարպետները պատրաստել են կարասները։ Աշխատանքը ընթացել է մոտավորապես հետևյալ հերթականությամբ։ Պատրաստի կավից վարպետ բրուտը վերցնելով մի բանի գունդ, դուրգի վրա պատրաստել է կարասի հատակը և ցածի մասը 20—30 սմ բարձրությամբ։ Կարմիր-բլուրի կարասների վրա պարզ երևում են դուրգի վրա պատրաստված կարասի ցածի մասի և ձեռքով պատրաստված վերևի մասի սահմանները։ Ամեն մի վարպետ պատրաստել է այնքան հատակ, ինչքան կարաս կարող էր նախաձեռնել միանգամից, որովհետև դուրգի վրա կարասի ցածի մասը պատրաստելուց հետո, հետագա աշխատանքները կատարվել են ձեռքով մինչև կարասի ավարտումը։ Կարասների ցածի մասերը մեկը մյուսի ետևից ավարտելուց հետո, բրուտը վերցրել է մի գունդ կավ, պատրաստել 3—5 սմ հաստությամբ այսպես կոչված պատրույգը, այն ամրացրել է դուրգից դուրս բերված կարասի հատակի կիսախոնավ պատերին, մատներով հարթել ու բարձրացրել է կարասի պատերը։ Մեկ պատրույգով նա հնարավորություն է ունեցել բարձրացնել պատերը 8—10 սմ։ Ինչքան մոտեցել է կարասի փորի ամենալայն մասին, այնքան ավելի երկար է պատրաստել պատրույգը։ Ամեն պատրույգի բարձրությամբ հյուսելուց հետո կիսավարտ կարասը հղկել են և թողել ծածկի տակ չորանալու, ոչ լրիվ չորանալուց հետո հնարավոր է եղել հյուսել հետևյալ պատրույգը։ Պատրույգները իրար լավ միացնելու համար տակի պատրույգի վերին եզրին մատների ճնշումով արվել են փոսիկներ, որոնց մեջ ատամնավոր ելուստներով մտնում էր վերին պատրույգի ցածի եզրը։ Ստեղծվել է ամուր կապ, որի շնորհիվ երբեք կարասը այդ մասից չէր ճաքի։ Կարմիր-բլուրի կարասները ուշադրությամբ դիտելիս, նկատելի են առանձին պատրույգների միացման սահմանները, որոնք երևում են նույնիսկ թրծելուց հետո։ Իսկ 1958 թ. Էրեբունիի պեղումներից № 4 կարասային պահեստում հայտնաբերված կարասի բեկորի վրա երևում են

[1] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 236։ Երևանի օդանավակայանը կարելի է համարել Թեյշեբաինիի շրջակայքը, քանի որ գտնվում է ընդամենը 2—3 կիլոմետր հեռավորության վրա։

[3] В. С. Сорокин, Раскопки древнего поселения, Кармир-блур, II, Ереван, 1952, էջ 81։

[4] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 235։

մատների ճնշումներ, որոնք լավ չեն կատարվել, ուստի ատամնավորումը թույլ է եղել, կարասը ջարդվել է հենց պատրույգի կապի տեղից[1] (նկ. 1 և 2)։

Այս եղանակով պատրաստված կուրասը վարպետ-բրուտ Մասումյանի կարծիքով ամբողջովին ավարտվել է մոտավորապես 10—12 օրվա ընթացքում. դրա համար էլ վարպետ բրուտը զբաղված չի եղել մեկ կարասի պատրաստումով։ Առանց ընդհատումների աշխատելու և ժամանակը լավ օգտագործելու համար բրուտը պետք է ձեռնարկեր 6—10 կարասի միաժամանակյա պատրաստմանը։ Այդ դեպքում վարպետը հնարավորություն է ունեցել պատրույգները հյուսել մեկը մյուսի հետևից՝ առանց սպասելու, քանի որ հինգերորդ կամ վեցերորդ կարասի վրա պատրույգը հյուսելու ժամանակ, առաջինը արդեն չորացած կլիներ այն աստիճան, որ հնարավոր կլիներ նոր պատրույգը հյուսել։

Նկ. 1. Պատրույգը միացնելու համար մատների ճնշումով արված փոսիկներ կարասի բեկորի վրա։

Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչո՞ւ Կարմիր-բլուրից հայտնաբերված 400-ից ավելի կարասների շուրթերին նշված են ութ-ինը վարպետների նշաններ։ Ամեն մի վարպետ պատրաստել է 40—50 կարաս, արագ ուրստ հնարավորին կարճ ժամանակամիջոցում, ավարտված միջնաբերդի պահեստներում տեղավորելու համար։

Նկ. 2. Մատների հետքերը կողքից դիտված։

Այժմ տեսնենք, թե ինչպես են կատարել կարասների թրծումը։

Հին Աշխարհում կավե անոթները թրծել են հնոցներում, որոնց մնացորդները հայտնաբերվել են հնագարյան քաղաքների պեղումների ժամանակ։ Այդ հնոցները ընդհանուր գծերով նման են ինչպես միջնադարյան հնոցներին, այնպես էլ այժմյաններին։ Հնագարյան հնոց է հայտնաբերվել Նիպուրում (III հազարամյակ մ. թ. ա.), որը իրենից ներկայացրել է մի լառանկյունի կառուցվածք 4 մետր երկարությամբ և 2,23 մ լայնությամբ։ Մածկը կամարաձև է եղել և ունեցել է 1,20 մետր բարձրություն[2]։ Հին Եգիպտոսի Մեդամուտ քաղաքում հայտնաբերել են հնոցներ, որոնք վերաբերում են մ. թ. ա. III հազարամյակի վերջին, երկրորդ հազարամյակի սկզբին, այսպես կոչված միջին թագավորության ժամանակաշրջանին։ Այդ հնոցներից մեկը շրջանակաձև է եղել և ներքևի մասում ունեցել է 1,30 մ տրամագիծ և 0,20 մ պատերի հաստություն։ Հնոցը շարված է եղել աղյուսներով և ունեցել է 0,90 մ

[1] Պահեստը պեղել է Հայկական ՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Մարգո Իսրայելյանը։

[2] И. Лурье, К. Ляпунова, М. Матье, Б. Пиотровский, Н. Флиттнер, Очерки по истории техники Древнего Востока, Ленинград. 1950. էջ 80։

բարձրություն. հատակը ծեփված է եղել կավով, սակայն բազմաթիվ անցքերով կապվել է ներքևում գետնի մեջ փորված հնոցի հետ, որը ներսից ունեցել է 0,33 մ բարձրություն[1]։

Նույնանման հնոցներ գոյություն ունեն մինչև մեր օրերը Յուվայում (Արտաշատի շրջան)։

Մեր թվագրության IV—VI դարերին են վերաբերում 1946—1949 թթ. պեղումների ժամանակ Մինգեչաուրիում, Կուրի աջ ափին հայտնաբերված 23 հնոցները[2]։ Դրանք էլիպսաձև, ուղղանկյունի և շրջանակաձև երկհարկանի հնոցներ են, որոնք բիչ են տարբերվում վերևում նկարագրված եգիպտական հնոցից։

IX—X դարերին են պատկանում Բուլղարիայում Մապարա գյուղի մոտ հայտնաբերված բառանկյունի երկհարկանի հնոցները, որոնք նման են Մինգեչաուրիի և Դվինի 1950 թ. պեղված հնոցներին։ 1947 թ. Դվինում նույնպես հայտնաբերվել է XII—XIII դարերին պատկանող հնոց, որը շրջանակաձև է եղել, ինչպես այժմյան Յուվայի հնոցները[3]։

Դժվար չէ նկատել, որ վերևում նկարագրված հնոցները III հազարամյակից մ. թ. ա. մինչև մեր թվականության XIII դարը սովորաբար եղել են երկհարկանի, բառանկյունի, շրջանակաձև և էլիպսաձև։ Ներքևի հարկը ծառայել է կրակը վառելու համար, իսկ վերևում կատարվել է թրծումը[4]։

Մոտավորապես նույնպիսի հնոցներում նույն եղանակով են կատարել նաև ուրարտական կարասների և ընդհանրապես խեցեղենի թրծումը։

Կարասները թրծելուց հետո ստացել են կարմրավուն գույն։ Դա երևում է պահեստներից հանված կարասներից, որոնք կիսով չափ թաղված են եղել հատակի մեջ, թաղված մասը պահպանել է իր գույնը, իսկ ինչ վերաբերում է հողից դուրս մնացած կեսի մուգ գույնին, ապա դա հետևանք է ծխի ներծծվելուն կարասների մեջ, որ տեղի է ունեցել միջնարերդը այրվելու ժամանակ։

Ուրարտական կարասները համեմատած Հին Աշխարհի մյուս երկրների կարասների հետ, անհամեմատ ավելի խոշոր են։ Իրենց ձևով ու զարդարանքներով նման են ասորեստանյաններին, իսկ մեծությամբ և տարողությամբ կրետա-միրենյան կարասներին, որոնք հայտնաբերվել են Կնոսոսում[5]։ Դրանք կոնաձև, սրածայր, հսկայական կավե անոթներ են 1,5 մետրից մինչև 2 մետր բարձրությամբ, 0,85-ից մինչև 1,15 մետր տրամագծով ամենալայն մասում, ամուր ուղղահայաց շուրթերով, կարճ վզով, 0,35—0,48 մ բերանների տրամագծով։ Կարասները զարդարված են ներճկումով արված երեք շարք գեղեցիկ գոտիներով։ Մեկը անցնում է անմիջապես շուրթերի տակով, իսկ երկուսը ավելի ցածից՝ համարյա կարասների մեջտեղով. Ամենալայն մասում կան խորաքանդակ եռանկյունաձև զարդարանքներ։ Նույն զարդարանքներից կան նաև ներքևի մասում։ Այդ խորաքանդակների թե՛ վերևի, և թե՛ ներքևի շարքը թաղվել են հատակի մեջ և ունեցել են գործնական նշանակություն։ Նախ՝ ոչ ողորկ մակերեսով կարասները ավելի ամուր են լինում, քան հարթ մակերեսովները։ Երկրորդ. այդ խորաքանդակները հնարավորություն են տվել կիսաթաղված կարասները ամուր պահել հատակի մեջ.

[1] И. Лурье, К. Ляпунова, М. Матье, Б. Пиотровский, Н. Флиттнер, Նշվ. աշխ., էջ 219։

[2] Т. И. Ионе, О гончарных обжигательных печах из Мингечаура, Материальная культура Азербайджана, II, Баку, 1951, էջ 33։

[3] Կ. Ղաֆադարյան, Նշվ. աշխ., էջ 236.

[4] Թրծումը կատարվել է հետևյալ եղանակով. կարասները լրիվ ավարտելուց հետո, թողել են ծածկի տակ մի քանի օր չորանալու, որից հետո տեղափոխել են թրծման հնոցները։ Կարասները նախքան հնոցի մեջ տեղավորելը, մի քանի օր էլ թողել են հնոցի շուրջը՝ չորացումը շարունակելու համար։ Երբ կարասների որոշ մասը թրծվել է հնոցի մեջ, միաժամանակ նրա շուրջը շարված կարասները կիսաթրծվել են և այնուհետև անվնաս կտեղվել հնոցի մեջ՝ թրծումը ավարտելու համար։ Կարասները թրծել են մինչև ամբողջապես կարմրելը։ Առաջին օրը կրակը արել են թույլ, որովհետև ուժեղ կրակից կարասը կճաքեր, երկրորդ և երրորդ օրը կրակը ուժեղացրել են փայտով կամ աթարով։ Եգիպտոսում այդ անում էին ծղոտով ու եղեգով։ Թրծումը տևել է 2—3 օր, ավարտելուց հետո կրակը աստիճանաբար հանգցրել են, քանի որ ջերմության խիստ փոփոխումը պատճառ կլիներ կարասների ճաքելուն։ Այսպես են թրծել ոչ միայն կարասները, այլև ամեն տեսակ կավե անոթները։

[5] Charls Singer, F. J. Holmgard and R. Halle, A History of Technology, Oxford, 1955 էջ 400։

բանի որ խորաբանդակների մեջ տոփանված հողը նպաստել է կարասի ուղղահայաց դիրքին (նկ. 3)։ Ընդհանուր առմամբ իրար նման այդ կարասները արտաքին տեսքով և զարդաբանդակներով մեկը մյուսից տարբերվում են։ Կարասների որոշ մասը պատրաստված են մեծ վարպետությամբ, կրում են գեղեցիկ զարդաբանդակներ, իսկ որոշ կարասներ՝ կոպիտ են պատրաստված, ցածրորակ են։ Դա անշուշտ տարբեր վարպետների աշխատանքի արդյունք է, որ պարզ երևում է կարասների վրա դրոշմված նշաններից, որոնցից են, օրինակ, հինգթևանի աստղը, խաչը, երեք կետը և այլն։ Նույնը կարելի է ասել նաև կարասների եռանկյունի խորաբանդակների մասին, որ կատարված են փայտից պատրաստված հատուկ կաղապարներով՝ ճնշելու եղանակով։ Թրծումից հետո էլ նկատվում են կաղապարների հետքերը։

Ինչ վերաբերում է կարասների վրա նշված տարողության չափերին (սեպագիր կամ հիերոգլիֆ նշումներ), ապա դրանք արված են կարասները թրծելուց, հավանաբար նրանց մեջ որևէ հեղուկ կամ սովորաբար գինի լցնելուց հետո։

Թե սեպագրերը և թե հիերոգլիֆ նշանները օգտագործել են միաժամանակ, որոնք արտահայտել են տարողության չափերը՝ ակարկի և տերուսի։ Սկզբնական շրջանում սեպագրերը գրել են լրիվ, իսկ հետագայում՝ միայն սեզբի տառերը։ Հիերոգլիֆ նշանները նշանակել են խորացրած կետերով, ուղղահայաց գծիկի երկու կողմերով, ձախ կողմը նշել են տերուսի, իսկ աջ կողմը՝ ակարկի։

Մեկ ակարկին, ըստ պրոֆեսոր Բ. Բ. Պիոտրովսկու, հավասար է 2,250 լիտրի, իսկ տերուսին 1/10 ակարկիի։ Կարասների տարողության սեպագիր և հիերոգլիֆ նշանները մեկը մյուսից քիչ են տարբերվում, բանի որ կարասների չափերն էլ իրարից քիչ են տարբերվում։ Կարելի է եզրակացնել, որ կարասների վրա նշված տարողության չափերը արտահայտել են նրանց մեջ լցված գինու քանակը, որը ընդհանուր առմամբ համընկել է կարասի տարողության հետ։ Այդ պարզ երևում է գինու կարասների վրա մինչև երեք անգամ նշված չափերից, որոնց տարբերությունը հասնում է մի քանի տերուսիի։ Այս մասին է վկայում վերջապես տարողության չափերի գրելը կարասները պահեստներում տեղավորելուց հետո։

Կարմիր-բլուրում հայտնաբերված կարասներից միայն երերը աչքի են ընկել իրենց փոքր չափերով։ Օրինակ՝ մեկ ակարկի 4,5 տերուսիից մինչև 1 ակարկի 5,5 տերուսի, մնացած կարասների մեծ մասը 3 ակարկի 4 տերուսիից հասնում են մինչև 5 ակարկի 5 տերուսի։ Վերջին ամենամեծ կարասները հայտնաբերվել են № 25 պահեստում։

Եգիպտոսում հունա-հռոմեական և կոպտական ժամանակաշրջանում գինու կարասները անթափանցելի դարձնելու համար ներսից ծածկել են սև գույնի հալված կուպրով[3]։

Հավանական է, Կարմիր-բլուրի կարասները նույնպես, նախքան գինի լցնելը, ներսից պատել են որևէ անթափանցելի նյութով[4]։

Այս բոլորից հետո կարասները փոխադրել են նախօրոք պատրաստված պահեստները և այնտեղ կիսաթաղված վիճակում շարել են հատակի մեջ։ Դրանից հետո մառաններն են փոխադրել հսկայական բանակությամբ փափուկ հող և լցրել կարասների շուրջը կիսով չափ, դրանք թաղելով։ Ապա հատակը հարթել են, տոփանել պնդացրել ու ծեփել։ Այդ հողաշերտը ընդհանրապես եղել է մեկ մետրից ավելի մինչև երկու մետր։ Երկու մետր տոփանված հողաշերտ է ունեցել № 40 գինու պահեստը։ Մնացած պահեստների հողաշերտը եղել է 1,30—1,50 մ։ Հին Աշխարհում գինու մառանները երեք տեսակ էին լինում։

Առաջինը, որը ամենատարածված ձևն էր Եգիպտոսում և Կրետեում, այն էր, որ կարասները մառաններում շարված էին լինում կողը-կողքի։

Եգիպտոսում գինու կարասները ուրարտականներից անհամեմատ փոքր էին։ Ամենամեծ կարասները մեկ մետրից բարձր չէին։ Մառաններում շարված էին լինում կողը-կողքի հենված։

---

[1] Բրուտ Գ. Մասումյանի արհեստանոցում այդպիսի զարդաբանդակներ պատրաստելու ժամանակ տեսներ հետևյալը. վարպետը ներճկումով կատարած դոտիների տեղում կավը թողել էր ուռուցիկ, որից հետո ցուցամատով կամ որևէ գլանաձև փայտիկով հավասար հեռավորության վրա և թերությամբ ճնշում էր ուռուցիկ շրջանակները։

[2] Б. Б. Пиотровский, Кармир-блур, II, Ереван, 1952, էջ 66։

[3] А. Лукас, Материалы и ремесленные производства древнего Египта, Москва, 1958.

[4] Արարատյան դաշտի գյուղերում և այլ խաղողագործական շրջաններում կարասների նախքան գինի լցնելը, ներսից պատում են անասունի ճարպով, մեղրամոմով, կամ կուպրով, որպեսզի գինին չներծծվի կարասի պատերի մեջ։

Նկ. 3. Դիտաքիզված կարասներ տափանված հողաշերտի մեջ։

Ինչպես վերևում նշեցինք, կնոսոսյան կարասները տարողության տեսակետից ուրարտական կարասների նման են, սակայն նրանք պահվում էին կանգնած վիճակում, քանի որ նրանց հատակները լայն էին։

Երկրորդ տեսակի մառանները հենարան-նստարաններով՝ տարածված էին մասամբ Եգիպտոսում և Փյունիկիայում։ Այդ նստարանների մեջ տեղավորված կարասները եղել են կլոր հատակներով և տարողությամբ շատ փոքր։

Երրորդ տեսակի մառաններում կարասները կիսով չափ թաղել են հատակի մեջ։ Այս եղանակով սարքված մառանները, համեմատած առաջին երկու տեսակի մառանների հետ, ավելի գործնական են եղել և ունեցել են մի շարք առավելություններ։ Տարածված են եղել Ասորեստանում և Ուրարտուում, հետագայում նաև Հայաստանում ու Վրաստանում (նկ. 4)։

Այսպիսի մառանների առավելություններն են.

Ամենակարևորն այն է, որ նրանք հարմարեցված են գինու վերամշակման համար։

Երկրորդ՝ այդ կարասները կարելի է տեղավորել ավելի՝ փոքր տարածության վրա։

Երրորդ՝ կարասների կիսաթաղելը բարերար ազդեցություն է ունենում գինու որակի վրա, հատկապես տաք եղանակներին։

Չորրորդ՝ կարասների ջարդվելու և ճաքելու վտանգը ավելի քիչ է։

Ելնելով մառաններում կարասների տեղավորման այս առավելություններից և պարզապես առաջին երկու եղանակով կարասները պահելու անհարմարությունից, ուրարտացիները նախընտրել են երրորդ եղանակը։

Կարմիր-բլուրի ութ մառաններում հնարավոր է եղել պահել մոտավորապես 400.000 լիտր գինի։ Այսպիսով, Կարմիր-բլուրի մառանները գերազանցել են մինչև այժմ հայտնի բոլոր ուրարտական գինու պահեստներին, նույնիսկ Մանազկերտի մոտ՝ Բոստան-կայայում Մենուայի թողած արձանագրության մեջ նշված 900 ակարկիով գինու պահեստին[1]։ Կարմիր-բլուրում պահվել է 1500 ակարկիից ավելի գինի, այսինքն, Մենուայի պահեստից 600 ակարկիով ավելի (մեկ ակարկին, ըստ պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու, հավասար է 240—250 լիտրի)։

Տարողության նշանների գոյությունը և կարասների հատակին անցքերի բացակայությունը վկայում են, որ կարասները ծառայել են ընդհանրապես գինի և այլ հեղուկներ պահելու համար։ Կարասների տեղաշարժելը և մառաններում տեղավորելը կապված է եղել մեծ դժվարությունների հետ։ Ելնելով Կարմիր-բլուրի միջնաբերդի կառուցվածքից և գինու պահեստների ցրվածությունից, պետք է ենթադրել, որ այդ աշխատանքներին մասնակցել են մեծ թվով մարդիկ, որովհետև երկու-չորս մարդու միջոցով հնարավոր չէր ծանր ու վերցնելու հարմարություն չունեցող կարասները անմիջապես տեղադրել պահեստներում։ Հետաքրքիր են այս տեսակետից կնոսոսյան կարասները, որոնք ունեն մի քանի տասնյակ բռնակներ, և դրա շնորհիվ նրանց տեղափոխելը շատ հեշտ էր։ Նրանց հատակները, ինչպես ասեցինք, ավելի լայն են և կարասը հանգիստ մնում էր կանգնած վիճակում։

Ուրարտական կարասների տեղափոխման մասին պարզ պատկերացում ենք կազմում Ռուսախինիլի գահերի վրայի բրոնզե զարդարանքների մի բեկորից, որի վրա ուշադրություն է դարձրել Գ. Ղափանցյանը[2] (նկ. 5)։

Սալմանասար III-ի՝ դեպի Ուրարտու կատարած արշավանքի տեսարաններից զարդարանքներում կան բերդերի գրավման և ավարի տեղափոխման բազմաթիվ պատկերներ. այդ թվում նաև մի կարասի տեղափոխման զարդարանդակ։ Այնտեղ 16 ուրարտական ռազմագերիներ լծված են չորս անիվանի սայլին, որի վրա մի կարաս պառկած վիճակում պարաններով ամուր կապած է սայլին։ Մեկ ուրիշ պարան, որը քաշելով շարժման մեջ է դրել սայլը, երևում է։ Սայլի շարժման ժամանակ կարասը չընկնելու համար պարանի մեկ ծայրը կապել են կարասի վզից, իսկ մյուս երկու ծայրերը՝ սայլի աջ և ձախ կողմերից, և 11 ռազմագերիները քաշում են սայլը։ Ասորեստանյան ռազմիկը քայլում է նրանց կողքից և ղեկավարում սայլի ընթացքը։ Սայլի վրա կարասի կողքին նույնպես կանգնած է մի ռազմիկ և ղեկավարում է սայլի ուղղությունը, իսկ սայլի հետևից մի ռազմագերի բռնել է կարասի հատակամասից և այն պաշտպանում է ցնցումներից։ Երկու ռազմագերիներ էլ սայլի ետևից են բռնել ձողից՝ այստեղից ուղղելով շարժման ընթացքը։

Կարասն ըստ երևույթին լի է ավար վերցրած իրերով կամ մթերքով։ Գինի կամ այլ հեղուկ տեղափոխելու տվյալ դեպքում բացառված է, քանի որ կարասը պառկած վիճակում է։

---

[1] Г. А. Меликишвили, УКН, ВДИ, № 2, 1953.

[2] **Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 65։**

Նկ. 4. Գինու մառան հատակի մեջ կիսաթաղված կարասներով։



Նկ. 5. Բալավաթի դռների վրայի զարդարանդակի բեկոր՝ կարասը տեղափոխելու տեսարանով

Տարբեր մեծությամբ կարասները ուրարտական և հետուրարտական ժամանակաշրջանում երկար ժամանակ, հատկապես հայերի և փրյուգիացիների մոտ, հանդիսացել են հիմնական տարա: Կարասների մեջ պահել են խմիչքներ. յուղ, թթուներ, հացահատիկ և այլն, ոչ միայն պահել են, այլև նրանցով տեղափոխել են մի վայրից մյուսը: Հերոդոտը հաղորդում է, որ հայերը կավե անոթներով կամ փոքր կարասներով դեպի Բաբելոն գինի էին արտահանում[1]:

«Նրանց (արմենների) նավերը, որ լողում էին գետերի հոսանքով դեպի Բաբելոն, վահանների նման կլոր էին, ամբողջապես եղեգով և բեռներով բառնալուց հետո բաց էին թողնում գետի հոսանքով: Նավերը բարձված էին լինում հատկապես գինով՝ կավե կարմիր անոթների մեջ»: Հերոդոտի հաղորդման վերջին տողերը, այսինքն «կավե կարմիր անոթների մեջ», մինչև այժմ որոշ հեղինակների կողմից թարգմանվել է այսպես՝ «արմավենուց պատրաստված տակառների մեջ» (Գ. Տ. Միքչենկո, Հ. Հ. Մանանդյան):

Այսպիսի թարգմանությունը ճիշտ չէ հետևյալ պատճառներով: Նախ՝ „Βίκους φοινικηίους" բառերը նշանակում են «կարմիր կավից անոթներ», երկրորդ՝ Հայաստանում արմավենուց տակառներ պատրաստելը ն. մ. թ. VI—V դարերում բացառված է, քանի որ նախ՝ արմավենին հայկական լեռնաշխարհի ոչ մի վայրում չի աճում և եթե որևէ շրջանում էլ աճում էր, ապա այն երբեք չէր օգտագործվի ատաղձ պատրաստելու, առավել ևս տակառներ պատրաստելու համար:

Երրորդ. նույն Հերոդոտը Եգիպտոսի մասին գրում է. «Տարին երկու անգամ Ատտիկայից և Փյունիկիայից հույները գինին կավե անոթներով տանում էին Եգիպտոս վաճառելու համար»: Եթե հույները գինին արտահանում էին կավե անոթներով, կասկած չկա, որ հայերը նույնպես կավե անոթներով էին արտահանում, և Հերոդոտի ուշադրությունն էին գրավել միայն կլոր նավերը և կարմիր գույնի կավե անոթները, մի երևույթ, որը հույների մոտ չկար:

Եվ վերջապես, փայտյա տակառները որպես տարա առաջին անգամ օգտագործել են (Պլինիուսի և հռոմեական ուրիշ պատմիչների հաղորդման համաձայն) գալլերը՝ գինին դեպի Հռոմ արտահանելու համար, սկսած մեր թվականության երկրորդ դարից:

Հայկական մառաններում հատակի մեջ կիսաթաղված կարասներում գարեջուրը պահելու մասին է հաղորդում Քսենոֆոնը[2]:

---

[1] Herodoti, Historiarum libri IX, Lipsiae, 1899. liber I, գլ. 194:

[2] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1944, հատ. 1, էջ 78:

Կարելի է եզրակացնել, որ ն. մ. թ. IX—VI դարերում Ուրարտուում մեծ թվով կարասների արտադրության համար անհրաժեշտ են եղել խոշոր արհեստանոցներ, որտեղ արտադրվել են ոչ միայն կարասներ, այլև կավե տարայի մյուս տեսակները, որոնք պատրաստված են բացառապես դուրգի վրա և աչքի են ընկնում իրենց բարձր որակով։ Դրանք են՝ գլանաձև գարեջրի անոթներ, գինու գավեր, տարբեր չափերի ձեթի, հացահատիկի կարասներ և այլն։ Կարմիր-բլուրի միայն N 29 պահեստից հայտնաբերվել են 1036 գինու գավեր, որոնք համապատասխանում են 16 գինու մեծ բանակին։

Բնակչության տնտեսության և կենցաղի մեջ, ինչպես և փոխադրությունների նպատակով օգտագործվող կավե անոթների պահանջը շատ մեծ է եղել ու բազմակողմանի, ուստի և նրանց արտադրությունը մեծ տեղ է բռնել։ Դատելով Կարմիր-բլուրի անոթների որակից և պատրաստման առանձնահատկություններից, կարելի է պնդել, որ ուրարտական բաղարներում զարգացած կավագործությունը արդեն բաժանվել էր գյուղատնտեսությունից և ինքնուրույն արհեստ էր դարձել մյուս արհեստների շարքում։

Մանր արհեստավորն էլ չէր կարող բավարարել պետական տնտեսության պահանջը, ուստի պետք է ենթադրել, թե առաջ էին եկել խոշոր արհեստանոցներ բազմաթիվ աշխատողներով։ Դրանք պալատական, տաճարային կամ մասնավոր տարբերների արհեստանոցներ էին և բավարարում էին տարայի պահանջը։ Կավագործությունը Ուրարտուում հատկապես ն. մ. թ. VII դարում, ինչպես ցույց են տալիս Կարմիր-բլուրի պեղումները, բավականին լայն բաց է ունեցել, և այդ արտադրությունը, բացի կենտրոնից, ընդլայնվել է նաև երկրի ծայրամասերում, բավարարելով տեղական պահանջները։

Կարասների և ընդհանրապես կավե անոթների օգտագործումը որպես տարա մինչև օրս էլ մնում է հայ ժողովրդի կենցաղում՝ աստիճանաբար տեղի տալով տարայի մյուս տեսակներին։

О ВИННЫХ КАРАСАХ ГОРОДА ТЕЙШЕБАИНИ (КАРМИР-БЛУР)

З. М. КАСАБЯН

(Р е з ю м е)

На древнем Востоке в отдельных отраслях хозяйства широко применялись тара-карасы разнообразной величины и емкости.

В Египте, Ассирии, а также и у хеттов и урартов, сельскохозяйственные продукты, разные злаки, вино, пиво, масла и пр. хранились в тара-карасах.

Из раскопок Топрах-Кале, Вана, Аргиштихинили, Тейшебаини и Эребуни найдены разнообразная керамика, остатки тары. При изучении этой тары мы большей частью основывались на археологических материалах, а в технологии их приготовления — на данных нынешней кустарной промышленности и на богатом сравнительном материале древнего мира.

Для производства тары были необходимы большие мастерские, в которых можно было приготовить не только карасы для вина, но и разнообразные керамические сосуды. Тара приготовлялась исключительно из красной глины, с большим мастерством (сигарообразные сосуды для пива, сосуды для злаков, кувшины для вина, для масла, тарелки, чаши и пр.).

В VII в. до н. э. объем производства тары в Урарту значительно возрос. Ее начали изготовлять также в хозяйственных центрах, расположенных на окраинах государства, что удовлетворяло местный спрос.

После урартов карасы, как тара, нашли широкое применение в хозяйстве армянского народа.